ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ Աղասի Աղայանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-7-ը Ղազախստանի Հանրապետություն (ք. Աստանա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Աղասի Աղայան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Աստանա, 2024 թվականի դեկտեմբերի 4-7-ը

3. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել «Անտիկոնտրաֆակտ - 2024» համաժողովին (այսուհետ՝ Համաժողով): Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության և «Անտիկոնտրաֆակտ» միջազգային ասոցիացիայի կողմից անցկացվող Համաժողովին մասնակցել են ԵԱՏՄ անդամ պետությունների մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության բնագավառի իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներ, իրավատերեր, ապրանք արտադրողներ, սպառողների միավորումներ, փորձագետներ, մասնագիտական համայնքների և ՁԼՄ ներկայացուցիչներ: Համաժողովին հրավիրված էին դիվանագիտական կորպուսի և ընկերությունների ներկայացուցիչներ Հնդկաստանից, Իրանից, Չինաստանից, Թունիսից, Թուրքմենստանից և Ուզբեկստանից:

Համաժողովը հանդիսանում է մտավոր սեփականության իրավունքների պահպանության և կիրարկման արդի խնդիրների, ոլորտի հիմնական մարտահրավերները քննարկելու և կեղծ

ապրանքների տարածման դեմ պայքարում արդյունավետ լուծումներ գտնելու ԵԱՏՄ շրջանակներում ամենամյա պարբերությամբ գործող կարևորագույն հարթակ:

Համաժողովի ծրագիրը բաղկացած էր մտավոր սեփականության բնագավառի առաջատար փորձագետների մասնակցությամբ լիագումար նիստից և 10 քննարկման նիստերից՝ նվիրված իրավական կարգավորմանը, մաքսային հսկողությանը, սպառողների իրավունքների պաշտպանությանը, էլեկտրոնային առևտրի զարգացմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությանը մտավոր սեփականության ոլորտում:

Համաժողովի նպատակն էր եվրասիական ինտեգրման համատեքստում մտավոր սեփականության դեմ պայքարի բնագավառում խնդրահարույց հարցերի, արդյունաբերական արտադրանքների անօրինական շրջանառության, սննդային և բժշկական արտադրանքի շրջանառության օրինականության, տեխնիկական կանոնակարգման և ապրանքների անվտանգության, սպառողների շահերի պաշտպանության, առցանց առևտուր իրականացնելիս խախտումների հակազդման, կեղծված ապրանքների դեմ պայքարի մաքսային և հակամենաշնորհային գործիքների կիրառման հետ կապված հարցերի քննարկումը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ԵԱՏՄ անդամ պետությունների մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության բնագավառի իրավասու պետական մարմինների և ապրանքային նշանների իրավատեր Եվրասիական և արտասահմանյան ընկերությունների ներկայացուցիչների միջև համագործակցության և փորձի փոխանակման միջոցով ընդհանուր խնդիրների և մարտահրավերների առավել արդյունավետ լուծման ուղիների նախանշումը:

5. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկված թեմաներն են՝

- դրոշմավորման զարգացումը ԵԱՏՄ-ում,

- հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման դերը հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության մեջ,

- առցանց առևտրի վերհսկողության դերը կեղծված արտադրանքի դեմ պայքարում,

- բացառիկ իրավունքների շրջանառության և մտավոր սեփականության շուկայի պաշտպանության ոլորտում թվային ենթակառուցվածքը,

- ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների խախտումների մինչդատական և դատական վեճերի քննությունը,

- աշխարհագրական նշումների դերը ազգային բրենդների առաջխաղացման և տարածաշրջանային տնտեսության զարգացման մեջ, հեռանկարները,

- աղմուկ հանուն անվտանգության՝ մեդիայի կարևոր դերակատարությունը կեղծված ապրանքների վտանգավորության մասին սպառողների տեղեկացվածության հարցում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում հնչել են ելույթներ և քննարկվել են հետևյալ հարցերը.

Դրոշմավորման հետ կապված՝

- շուկայի կարգավորման միասնական մոտեցում, ազգային համակարգերի տվյալների փոխանակում և համաժամանակեցում՝ որպես անդրսահմանային գործակցության պարզեցում, սպասվող ազդեցությունը ազգային բյուջեի վրա, լավագույն փորձի ընդօրինակում և ինչ նոր խմբեր պետք է դրոշմավորվեն:

Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության գործում հեղինակների իրավունքների կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների (ՀԿԿԿ) գործառույթները, իրավակիրառ փորձը, հանրահայտ գործերը: ՀԿԿԿ-ների դատական փորձը, փորձառությունը, զարգացումները և խնդիրները: Օրենսդրության մեջ ՀԿԿԿ-ների հեղինակային իրավունքների պաշտպանության վերաբերյալ նորությունները:

Առցանց խանութների շուկան՝

- այն սրընթաց աճում է և ընդգրկում է ոչ միայն տեղային սպառողներին, այլ նաև ամբողջական երկրներ: Առցանց առևտուրը յուրացնում է հսկայական շուկա՝ ապահովելով ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը ԵԱՏՄ տարածքում: Սակայն ոչ բարեխիղճ ձեռնարկատիրոջ մուտքը առցանց հարթակներ առաջացնում է բարեխիղճ խաղացողներին դուրս մղման ռիսկ, իսկ սպառողները, գնելով պարտադիր պահանջներին չհամապատասխանող արտադրանք, վտանգի են ենթարկվում: ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների համար առանձնապես կարևոր է վերահսկել ապրանքների անվտանգությունը և կանխել կասկածելի արտադրանքի վաճառքը: Այն կբարձրացնի վստահությունը առցանց գնումների նկատմամբ և կապահովի մարդկանց առողջության պաշտպանությունը,

- առցանց խանութների շուկայում ապրանքների վերահսկման աշխատող մեխանիզմի ստեղծում, այդ հարցում առկա միջազգային փորձը, համակողմանի լուծում, որը կիրառելի կլինի ամբողջ ԵԱՏՄ տարածքում, սպառողներին սպասվող առավելությունները:

Թվային ենթակառուցվածքը՝ բացառիկ իրավունքների շրջանառության և մտավոր սեփականության շուկայի պաշտպանության ոլորտում, մտավոր սեփականության շուկան, ապրանքային շուկաները և արդյունաբերական արտադրանքի անօրինական շրջանառությունը թվային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում, մոտեցումները և խնդիրները:

Պետական տեղեկատվական համակարգերը (ռեեստրներ, ռեգիստրներ և այլ տվյալների բազաներ, փնտրման համակարգեր) որպես կեղծված ապրանքների անօրինական շրջանառության հակազդման գործունեության թվային ենթակառուցվածքի հիմք, համակարգերի համադրելիությունը և փոխգործելիությունը:

Թվային տեխնոլոգիաները որպես ոչ նյութական ակտիվների հաշվառման գործիք: Թվային տեխնոլոգիաները՝ մտավոր սեփականության իրավունքի մշտադիտարկման բնագավառում: Թվային գործիքները համացանցում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության իրավակիրառ պրակտիկայում: Թվային լուծումները իրավախախտումների բացահայտման, կանխարգելման և կանխման, սահմանափակող միջոցների կիրառման և իրավական պատասխանատվության ենթարկելու գործում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մասնակիցները պատրաստակամություն են հայտնել շուկայից կեղծված ապրանքների դուրս մղման նպատակով մշակել ԵԱՏՄ անդամ երկրներում օրինական արտադրության և արտաքին առևտրային գործունեության տնտեսական խթանների հետ «իրավապահ» գործիքների արդյունավետ համադրություն և տարբեր ձևաչափերով մանրամասն քննարկել դրանք:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Սպառողական ապրանքների և ծառայությունների աննախադեպ աճի պայմաններում հաճախ սպառողը կորցնում է որակի և անվտանգության հարցում կողմնորոշվելու ունակությունը: Հասարակության հնարավորինս լայն շերտերի իրազեկվածության հարցում իրենց ուրույն դերակատարությունն ունեն ԶԼՄ-ները: Բացասական երևույթների հեռարձակումը կեղծված արտադրանքի բացահայտման, վտանգների, թունավորման դեպքերի մասին ավելին չէ, քան վնասակար արտադրանքի մասին տեղեկությունը հնարարավորինս արագ և հնարավորինս շատ մարդկանց հասցնելու միջոց, իսկ կեղծված ապրանքն օրիգինալից տարբերակելու վերաբերյալ օրիգինալի պաշտպանիչ հատկանիշների հրապարակումը որոշ դեպքերում իրավատիրոջ շահերից չի բխում, ինչպես նաև կեղծված ապրանքային նշանների կամ կոնկրետ ապրանքատեսակի վտանգավորության հրապարակայնությունը կարող է լուրջ վնաս հասցնել բարեխիղճ տնտեսվարողներին: Հաշվի առնելով նաև հրապարակվող տեղեկությունների ստուգված (ապացուցված) լինելու հանգամանքը, (օրինակ՝ դատական կարգով օրինական ուժի մեջ մտած վճիռ) այդ հրապարակումները կարող են անարդյունավետ և ժամանակավրեպ լինել:

Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած ապրանքների հետագծելիության ներդրումը անգնահատելի գործիք կարող է դառնալ կեղծված ապրանքների անօրինական շրջանառությունը բացառելու գործում: Արտադրողից (ներմուծողից) մինչև վերջնական սպառող հետագծելիության վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորություն կընձեռի բացահայտելու և կանխելու վտանգի աղբյուրը:

Այս դեպքում հասարակության իրազեկվածության հարցում ԶԼՄ-ների դերակատարումը նպատակամղված կլինի մասնավորապես օրինական վաճառակետերից երաշխավորված (որակյալ և անվտանգ) ապրանքների ձեռքբերման կարևորությանը, ինչպես նաև կասկածելի ապրանքների վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ին իրազեկմանը՝ հանուն իրենց իսկ բարօրության:

Մտավոր սեփականության պաշտպանությունը, ինչպես նաև արտադրանքի որակին և անվտանգությանը հետևելը պետության պոզիտիվ պարտականությունն է և ՀՀ ներկայիս ռազմավարությունը՝ ի դեմս արտադրանքի անհատական նույնականացման միջոցով հետագծելիության պահովման, ոչ միայն իրական շրջանառությունը բացահայտելու և ստվերի

դեմ պայքարելու, այլ նաև մտավոր սեփականության իրավունքի խախտումների դեմ պայքարի լայն հնարավորություններ է ստեղծում:

Համաժողովին մասնակցությունը հնարավորություն տվեց ծանոթանալ մտավոր սեփականության իրավունքի արդի խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին, տեղեկատվություն ստանալ ԵԱՏՄ անդամ երկրների կողմից կիրառվող փորձի վերաբերյալ: Փորձի փոխանակումը, ոլորտային խնդիրների վերաբերյալ քննարկումները, մտավոր սեփականության իրավունքի խախտումները ավելի խորքային ուսումնասիրելու հնարավորությունը կնպաստեն կեղծված ապրանքների շրջանառության դեմ պայքարում մաքսային ծառայողի մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների գծով մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության մասով հսկողության իրականացմանը, մաքսային կանոնների խախտման դեպքերի և վարչական իրավախախտումների կանխարգելմանը, բացահայտմանը և կանխմանը:

Հաշվի առնելով, որ կեղծված ապրանքների արտադրությունն ու շրջանառությունը մեծ վնաս են հասցնում մարդկանց առողջությանը և երկրի տնտեսությանը՝ նպաստելով նաև ստվերային տնտեսության աճին, ինչպես նաև այն, որ պայքարը արդյունավետ չի կարող լինել լոկալ (մաքսային հսկողության) միջոցներով, պատճառահետևանքային կապը բացահայտելու և համալիր լուծումներ գտնելու նպատակով ամենամյա պաբերությամբ Համաժողովը իրավատերերի և մտավոր սեփականության իրավունքի բնագավառում իրավասու մարմինների հետ ակտիվ համագործակցելով ամփոփում և նախանշում է դրանք:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աղասի Աղայան

11.12.2024թ.